

**ՅԱՀՎԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ**

Անի Հակոբյան

Բանալի բառեր՝ Յահվե, Բաալ, Քանան, երբայեցիներ, Էլ, Եհովա, Միոն, Շեմ, Էլշահիմ, Էլշահ, Ադոնայ

Երբայեցիների՝ որպես մեկ միասնական ազգի կայացման, իսկ հետագայում նաև հրեական պետության ձևավորման հարցում մեծ կարևորություն և դերակատարություն է ունեցել նրանց պատմության այն ժամանակաշրջանը, երբ նրանք այլևս հրաժարվում են ենթարկվել Եգիպտոսի փարավոնի բռնատիրական կարգերին և, ապստամբելով նրա դեմ, հեռանում են Եգիպտոսից: Նրանց են միանում եգիպտական բռնատիրությունից դժգոհ շատ այլ ցեղախմբեր: Եգիպտոսից հեռանալուց հետո երբայեցիները հաղթահարում են մի շարք դժվարին փորձություններ՝ շուրջ քառասուն տարի դեգերելով Մինայի անապատում: Այս ընթացքում նրանք վերջնականապես հրաժարվում են բազմաստվածությունից և անցնում են միաստվածության՝ երկրպագելով Յահվե աստծուն, որն էլ, համաձայն Հին Կտակարանի, օգնում է նրանց գոյատևել Մինայի անապատի դաժան պայմաններում, հաղթահարել սովը, ցուրտը և մի շարք այլ փորձություններ: Երբայեցիների միաստվածական հավատքը կրում էր Յահվե աստծո անունը: Երբայերեն «յահվե» բառը նշանակում է. «Նա է գոյի սկզբնաղբյուրը»¹: «Յահվե» անունն առաջացել է երբայերեն «լինել» բայից և նշանակում է «նա, ով գոյություն ունի»: «Յահվե»

¹ The Jewish Study Bible, Oxford University Press, 2004, p.111.

նաև նշանակում է «նա, ով ամեն ինչ իրականություն է դարձնում», այսինքն՝ Արարիչ²: Լադարգեն «յահվե» բառը մեկնաբանում է որպես «նա, ով կատարում է իր բոլոր խոստումները»³: Չնայած «յահվե» եզրը հայտնի է որպես եբրայերենի քառատառ բառի՝ **יהוה** տառ առ տառ գրադարձություն՝ YHWH, սակայն այս բառն ի սկզբանե ձայնավոր նշաններ չի ունեցել որևէ եբրայական տեքստում, իսկ եբրայեցիները միշտ խուսափել են այդ անունը բարձրաձայն արտասանելուց, այդ պատճառով այս եզրի արտասանության շուրջ միշտ վիճաբանություններ են եղել⁴: Եզրը, ընդհանուր առմամբ, կապված է սեմական բառ-արմատ YHWH-ի հետ, որը նշանակում է «լինելու» կամ «դառնալու» գործընթաց: YHWH-ի հունական տառադարձությունը վկայում է, որ «յահվե» (yahweh) արտասանությունը ճիշտ է, և քանի որ ծագել է պատճառական լեզվական ձևից, պետք է կարդացվի հետևյալ կերպ՝ « *նա դառնում էր*» կամ « *նա էր* »⁵:

Երկարատև դեգերումներից հետո եբրայեցիները հաստատվում են Քանանում, ուր հետագայում հիմնում են Իսրայել պետությունը: Սակայն, ի տարբերություն նրանց, քանանցիները երկրպագում էին բազմաթիվ աստվածների, որոնք հիմնականում կրում էին Բաալ աստծո անունը: Այստեղից էլ նրանց հավատքը կոչվում էր բաալականություն: Բաալ աստծուն երկրպագել են Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդներ: Քանանի տարբեր քաղաք-պետություններում նա, համարվելով պանթեոնի գլխավոր աստված, հովանավորում էր տարբեր

² Schrader, Ebrehard, Die Keilinschriften und das Alte Testament, mit Ausdehnung auf die Apokryphen, Pseudepigraphen und das Neue Testament. 3, 1836-1908.

³ Smith M.S., The Early History of God: Yahweh and other deities in Ancient Israel, Erdmans, 2002, p. 32.

⁴ Miller P.D., The Religion of Ancient Israel, 2000, p.2.

⁵ Miller P.D., A History of Ancient Israel and Judah, Westminster John Knox Press, 1986, p. 110.

երևույթներ և, համապատասխանաբար, կրում էր տարբեր անուններ՝ Բաալ Շամեն (եբր. *בַּעַל שֵׁם* - երկնքի աստված կամ տիրակալ), Բաալ Շեմեշ (եբր. *בַּעַל שֶׁמֶשׁ* - արևի աստված կամ տիրակալ) և այդպես շարունակ: Ըստ ավանդության՝ Բաալը բնակվում էր Սիրիայի հյուսիսում գտնվող Ջաֆնոն (Կասիուս) լեռան վրա: Նա հաճախ պատկերվում էր կայծակը ձեռքին⁶: Նրա մասին հորինվել են շատ դիցաբանական առասպելներ: Բաալ աստծո սիրեցյալ էր համարվում քանանյան պանթեոնի աստվածուհի Ասթարթը՝ լուսնի հովանավոր աստվածուհին: Նախկին Քանանի տարածքում կատարված պեղումների արդյունքում գտնված բանաստեղծություններից շատերը նվիրված են Բաալ աստծուն, որը ևս մեկ անգամ ապացուցելու է գալիս Բաալի պաշտամունքի առաջնայնությունը պանթեոնում.

*«Թու՛յլ տուր ասել քեզ, արքայա՛զն Բաալ,
Թու՛յլ տուր ինձ կրկնել, ամպերի տիրակա՛լ:
Տե՛ս քո թշնամիներին, Բաա՛լ,
Տե՛ս, դու կսպանես նրանց,
Տե՛ս, դու կոչնչացնես քո հակառակորդներին:
Ղու իշխանությունը կվերցնես քո ձեռքը,
Քո գերակայությունը կլինի ընդմիշտ»⁷:*

Նմանատիպ խոսքեր ուղղված են Յահվեին Աստվածաշնչի Սաղմոսաց գրքում. «Բայց դու, ո՛վ Եհովա, բարձունքում ես հավիտյան: Քո թշնամիները, ո՛վ Եհովա: Ահա քո թշնամիները կվերանան: Կցրվեն բոլոր նրանք, ովքեր չարիք են գործում: Բայց իմ եղջյուրը դու կբարձրացնես, ինչպես վայրի ցլինը...»⁸:

⁶ Miller P.D., *The Divine Warrior in Early Israel*, Cambridge, Mass, Harvard University Press, 1973, p 312.

⁷ Coogn M.D., *Stories from ancient Canaan*, The Westminster Press, Kentucky, 1978, p 20 (թարգմանությունը՝ հեղինակի կողմից)

⁸ Հին Կտակարան: Սաղմոսաց: 92-9: 145-13:

Որպես սեմական արմատ՝ «բաալ»-ը (եբր.՝ 𐤁𐤅) նշանակում է «տեր» կամ «ամուսին», սակայն այն ավելի շատ գործածվում էր որպես բնության տարբեր երևույթների տիրակալի կամ աստծո անուն, իսկ այդ բառի հոգնակի թիվը՝ «բաալիմ» (եբր.՝ 𐤁𐤅𐤁) նշանակում էր «աղեղնավորներ»⁹: Ժամանակակից եբրայերենում «բաալ» տերմինը հիմնականում կիրառվում է իր նախնական նշանակությամբ՝ «տեր», «ամուսին», թեպետ երբեմն այն կիրառվում է նաև որպես հաստուկ անուն, անձնանուն¹⁰: Վ. Ֆ. Օլբրայթը իր՝ 1941թ. դասախոսության մեջ առաջ էր քաշում այն վարկածը, որ Բաալ Բերիթը Հարուն աստծո անուններից մեկն է և, իրականում, այդ երկու պաշտամունքները նույնն են¹¹: Իսկ Ջ. Սմիթը և Պ. Քրայջը Բաալ Բերիթին կոչում էին նաև Էլ Բերիթ և առաջարկում այն վարկածը, համաձայն որի Էլ Բերիթն իրենից ներկայացնում է նույն հնդկա-իրանական Միտրա աստծո պաշտամունքը սեմական պանթեոնում¹²: Այս անվամբ Բաալ աստվածը ներկայացված է նաև Թանախում՝ որպես Քանանի հեթանոսական պաշտամունք. «Երբ Գեդեոնը մահացավ, Իսրայելի որդիները դարձյալ սկսեցին պռոնկանալ Բահաղների հետ և Բահաղ-Բերիթին իրենց Աստվածը դարձրին (34) Իսրայելի որդիները չհիշեցին իրենց Աստված Եհովային, որը ազատեց նրանց իրենց շրջակայքի բոլոր թշնամիների ձեռքից (35) և սիրառատ բարություն չցուցաբերեցին Հերոբահաղի՝ Գեդեոնի ընտանիքի հանդեպ այն ողջ բարության դիմաց, որ նա արել էր

⁹ Mendenhall G. E., The Hebrew Conquest of Palestine, The Biblica Archeologist, Vol. 25, No. 3, Sep.1962, pp 65-87.

¹⁰ Theodore J. L., The Identity and Function of El/Baal Berith, Journal of Biblical Literature, Vol.115, No. 3, Autumn 1996, pp. 401-426.

¹¹ Albright W. F., Yahweh and the gods of Canaan: a historical analysis of two contrasting faiths, School of Oriental and African Studies, The University of London, 1968, p. 110.

¹² Canney M. A., An Encyclopaedia of religions, G. Routledge and sons, 1921, p 263

Իսրայելին: Նրանք տվեցին նրան յոթանասուն կտոր արծաթ Բահադ-Բերիթի տնից, և դրանցով Աբիմելեքը դատարկապորտ ու սրիկա մարդիկ վարձեց, որ իր հետևից գնան: Երբ այս մասին իմացան Սյուքեմի աշտարակի բնակիչները, անմիջապես գնացին Էլ-Բերիթի տան ապաստարանը»¹³:

Երբայեցիների՝ Քանանում հաստատման շրջանում այնտեղ չկար կենտրոնաձիգ իշխանություն. այն բաժանված էր փոքր քաղաք-պետությունների, ուր տիրում էր կռապաշտությունը, և չկար մի ուժ, որն իր շուրջը կենտրոնացներ Քանանի բոլոր մասնատված և մանր թագավորությունները: Այս իրավիճակը բավականին խոցելի էր դարձնում Քանանը, ինչն էլ նպաստեց երբայեցիների կողմից Քանանի համեմատաբար հեշտ նվաճմանը:

Գիտնականներից շատերը գտնում են, որ հրեաները Քանանում ամբողջովին հաստատվել են Դավթի ժամանակներում: Հին Կտակարանում Դավթի և Գողիաթի մասին պատմող հատվածում կարդում ենք. «Մի օր փղշտացիներն իրենց բանակները հանեցին իսրայելիցիների դեմ: Այն ժամանակ Սավուդի գլխավորությամբ հրեաները նույնպես պատրաստվեցին կռվել: Երբ Դավիթը մոտեցավ հրեաների բանակին, տեսավ Գողիաթ անունով մի մարդու, որը ծիծաղում էր աստծո ժողովրդի վրա: Լսելով, թե Գողիաթն ինչպես է հայհոյում Աստծուն և հրեաներին՝ Դավիթը մոտեցավ Սավուդին ու խնդրեց թույլ տալ կռվել Գողիաթի դեմ: Ճակատամարտն ավարտվեց հրեաների հաղթանակով»¹⁴: Այս վկայությունից պարզ է դառնում, որ էթե թագավոր Դավիթը հանձ էր առնում հրեաների

¹³ Հին Կտակարան: Դատաւորաց 8-33, 9-4, 46:

" ויהי כאשר מת גדעון וישבו בני ישראל ויזנו אחרי הבעלים וישמו להם בעל ברית לאלהים: ויתנו לו שבעים כסף מבית בעל ברית וישכר בהם אבימלך: אנשים ריקים ופחזים וילכו אחריו: וישמעו כל בעלי מגדל שכם ויבו אל צריח בית אל ברית": שפטים 8-33: 9-4, 46:

¹⁴ Հին Կտակարան, Թագավորաց Ա, 17:1-58:

պաշտպանությունը, ապա նրանք պետք է որ արդեն Դավթի երկրում հիմնավորված ազգ համարվեին:

Նորման Գոթվալդը գտնում է, որ «նվաճում» եզրն անհրաժեշտ է փոխարինել «հաստատվել» եզրով¹⁵: «Նվաճում» ասելով մենք հաշվի չենք առնում այն հանգամանքը, որ քանանացիներն իրենց հերթին մեծապես ազդեցին եբրայեցիների վրա իրենց մշակույթով և լեզվով: Սա չի նշանակում, որ եբրայեցիների շարժումը դեպի Քանան ընթացել է առանց ռազմական գործողությունների: Սկզբնական շրջանում երկու կողմերի միջև սկսվում է մշակույթի, հավատքի և սովորույթների ակտիվ փոխանակում, իրենց հերթին փոխադարձ ազդեցության են ենթարկվում նաև քանանացիների հեթանոսական հավատքն ու եբրայեցիների միաստվածական հավատքը, որի արդյունքում եբրայեցիները նույնպես սկսում են իրենց աստծուն կոչել Բաալ, ապա լուրջ հակասություններ են առաջանում այդ երկու պաշտամունքների հետևորդների միջև: Բաալականությունը այնքան էր տարածվել եբրայեցիների շրջանում, որ անգամ Իսրայելի որոշ թագավորներ իրենց որդիներին կոչում էին Բաալ աստծո անվամբ: Այսպես, Դավիթ թագավորն իր որդուն կոչել էր Բաալյադա (եբր. *עדי יעד* - Բաալը գիտի), իսկ Սավուղ թագավորը իր որդուն կոչել էր Իշբաալ, (եբր. *ישבשׁא* - մարդ Բաալ), որը հետագայում ստացավ Իշբոշետ անունը (*ישבשׁא* - մարդ-ամոթ): Բաալի պաշտամունքի լայն տարածմանը Իսրայելում ապացուցելու է գալիս նաև այն, որ Իսրայելի միաստվածական հավատքի քարոզիչները լայն պայքար են սկսում դրա դեմ¹⁶:

¹⁵ Norman G., A light to the Nations, 2009, p. 160

¹⁶ Mendenhall G. E., The Hebrew Conquest of Palestine, The Biblical Archeologist, vol. 25, No.3, Sep. 1962, pp 65-87

Այսպես, Իսրայելի թագավոր Օմրին¹⁷ դաշինք էր կնքել փյունիկյան քաղաքների հետ, և նրա որդին՝ Ահարը, ամուսնացել էր Ջազբելի հետ, ով Էֆբաալի՝ Տայրայի և Միդոնի արքայի դուստրն էր¹⁸: Ջազբելն իր արքունիքի անդամների և հեթանոս քրմերի մեծ խմբի հետ թագավորական քաղաք Սամարայում քարոզում էր իր ազգի հավատքը՝ բաալականությունը՝ անընդմեջ այն նույնացնելով Յահվեի հետ, որի արդյունքում էլ Բաալի պաշտամունքը շատ արագ ներմուծվեց Իսրայել: Սամարայում անգամ կառուցվել էր Բաալի պաշտամունքի կենտրոն՝ տաճար: Սա, թերևս, նշանակում էր, որ իսրայելցիները Յահվեին հավասար ընդունում էին նաև Բաալի պաշտամունքը՝ հաճախ նույնացնելով դրանք: Շուտով իսրայելցիները Էլիշահի գլխավորությամբ պայքար են սկսում Բաալի պաշտամունքի դեմ՝ մերժելով Ջազբելի քրմերի բերած բոլոր փաստարկները Յահվեի և Բաալի նույնացման վերաբերյալ: Էլիշահը Տիշբեից էր: Նա Ահարի թագավորության ժամանակ գալիս է Սամարա, որպեսզի պայքարի Ջազբելի քրմերի կողմից քարոզվող Բաալ հեթանոսական աստծո պաշտամունքի դեմ: Էլիշահը Ջազբելի 450 քրմերին պայքարի է կանչում Քարմել լեռան վրա, որի ժամանակ պիտի պարզվեր, թե ում պաշտամունքն է իրականն ու ավելի զորեղը¹⁹: Հեթանոս քրմերը դիմում են իրենց Բաալ աստծուն, որպեսզի նա իր պատվանդանի վրա դրված փայտը այրի, սակայն այն այդպես էլ չի այրվում: Փոխարենը Յահվե աստծո պատվանդանի վրա դրված փայտը բոցավառվում է: Դա վճռորոշ նշանակություն ունեցավ,

¹⁷ Օմրին՝ (եբր. օօօօ , 'omry) կառավարել է (մ.թ.ա. 876-869թթ. կամ 884-872թթ.), եղել է Իսրայելի ամենահայտնի արքաներից մեկը, Ահարի հայրը: Նա մեծ դերակատարություն է ունեցել Իսրայելի պատմության մեջ: Նրա օրոք Իսրայելի մայրաքաղաքը Տիրայից տեղափոխվում է Սամարա:

¹⁸ Miller J.M., Hayes J.H., A History of Ancient Israel and Judah , 2006

¹⁹ Robinson H. W., A History of Israel, Duchworth, 1938

քանզի դրանից հետո Ջագբել թագուհու քրմերը հնազանդվում էին Յահվե աստծո առաքյալներին և ընդունում նրա պաշտամունքը՝ որպես գերակա և միակ: Ջոն Բրայթն այդ կապակցությամբ նշում է. «Բնական է, որ որոշ իսրայելցիներ պիտի դառնային դեպի քանանցիների «ազրարային կրոնը», որն իրենց նոր՝ «ազրարային հասարակության» կարևոր բաղկացուցիչ մաս էր, ուստի նրանք էլ սկսեցին երկրպագել քանանցիների պտղաբերության և մյուս հեթանոս աստվածներին: Որոշ իսրայելցիներ էլ պարզապես նույնացնում էին Բաալին և Յահվեին՝ անվանելով նրանց մեկը մյուսի անունով»²⁰:

Այժմ փորձենք վեր հանել Բաալի և Յահվեի նույնացման հնարավոր պատճառները.

- Յահվեի և Բաալի նույնացման մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ կային: Դրանցից մեկը գալիս է դեռ հին արևմտասեմական դիցաբանությունից, ուր գլխավոր աստված էր համարվում Էլը: Սակայն Էլին նույնացնում էին նաև Բաալ աստծո հետ: Էլի, հետևաբար նաև Բաալի սիրեցյալն էր Աշտար կամ Իշտար աստվածուհին: Սակայն դիցաբանական մի շարք ստեղծագործություններում Իշտարը նաև ներկայացված է որպես Յահվեի սիրեցյալ²¹, որն էլ հենց մոլորություն էր առաջացնում իսրայելցիների և քանանցիների մոտ Բաալ ու Յահվե աստվածների վերաբերյալ:

- Ուզարիթյան դիցաբանական տեքստերում Մոթը ներկայացվում է որպես մահվան և անդրշիրիմյան կյանքի հովանավոր աստված: Աստվածաշնչում Մոթը ներկայացված է Սատանա անվամբ: «Սակայն ձեռքդ մեկնիր, խնդրեմ, և դիպիր նրա ոսկորին ու նրա մարմնին և տես, թե արդյոք երես առ երես չի անիծի քեզ:

²⁰ Bright J., A History of Israel, Westminster John Knox Press, 2000, p. 156

²¹ Hess R.S., Israelite Religion: An Archeological and Biblical Survey, 2007, p. 103

Այդ ժամանակ Եհովան ասաց Սատանային. «Ահա նա քո ձեռքում է: Միայն թե զգույշ եղիր, որ նրա հոգուն չլիպչես»²²: Աստվածաշնչի Եսայեայ գրքում ասվում է, որ Յահվեն պիտի վերջ տա Մոթի՝ Սատանայի իշխանությանը, ինչը շատ նման է քանանյան դիցաբանության այն պատմությանը, որի համաձայն Բաալը իջնում է Մոթի թագավորություն՝ նրան կործանելու²³: «Նա կկլանի մահը հավիտյան, և Գերիշխան Տեր Եհովան կսրբի արտասուքը բոլորի երեսից: Նա ամբողջ երկրից կհեռացնի իր ժողովուրդի նախատինքը, որովհետև Եհովան է դա ասել»²⁴:

• Աստվածաշնչում ևս շատ են Յահվեի և Բաալի կամ Յահվեի և Էլի նույնացման օրինակները. «Դրանից հետո Աբրահամը կարմրանի ծառ տնկեց Բերսաբեեում ու այնտեղ կանչեց հավիտյան գոյություն ունեցող Աստծու՝ Եհովայի անունը»: Այս նույնացումը առավել ցայտուն երևում է եբրայերեն Աստվածաշնչում, ուր Աստծուն կոչում են հենց Էլ: Հատկանշական է նաև այն, որ շատ դիցաբանական տեքստերում որպես ն՛ Բաալի, և՛ Յահվեի խորհրդանիշ կենդանի ներկայացված է ցուլը²⁵:

• Թե՛ Յահվեն, թե՛ Բաալը կոչվում էին ամպերի տիրակալներ: Նրանք ապրում էին երկնքում և երկուսի տներն էլ եղեգնափայտից էին: «Գովերգեք Աստծուն, սաղմոս երգեք նրա անվանը: Գովերգեք Նրան, ով ձի հեծած անցնում է անապատի

²² Հին Կտակարան: Յոբայ: 2: 5-6:

"אולם שלח נא ידך ונע אל עצמו ולא בשרו אם לא אל פיניך יברכך: ויאמר יהוה אל השמן הנו בידך
אך את נפשו שמר" איוב: 2: 5-6:

²³ Coogn M.D., Stories from ancient Canaan, The Westminster Press, Kentucky, 1978, p 23.

²⁴ Հին Կտակարան: Եսայեայ: 25:8;

"בלע המות לנצח ומהה אדני יהוה דמעה מעל כל פוים וחרפת עמו יסיר מעל כל הארצ כי יהוה דבר"
ישעיה: 25:8

²⁵ Հին Կտակարան: Օսնդոց: 21-33

"ויטע אשל בבאר שבע ויקרא שם בשם יהוה אל": בראשית: 21-33

միջով: Յահվե է նրա անունը, ցնծացեք նրա առաջ»²⁶: Նման նկարագրություններ կան նաև Քանանի՝ Բաալին նվիրված դիցաբանական տեքստերում.

*«Բաալը ձեռքեց ամպերը,
Բաալը իր սուրբ ձայնով ասաց,
Բաալը հայտնեց իր շուրթերից...»²⁷:*

Բաալի և Էլի պաշտամունքային շատ գծեր անցել են Յահվեին, ուստի նույնացնելով նրանց պաշտամունքները՝ հաճախ նույնացվում էին նաև Սիոն և Սինայ լեռները՝ անգամ Աստվածաշնչում: «Երրորդ օրը՝ առավոտյան, որոտներ ու կայծակներ եղան, նաև մի թանձր ամպ հայտնվեց լեռան վրա, և եղջյուրի մի ուժգին ձայն լսվեց, այնպես, որ ճամբարում եղող ամբողջ ժողովուրդը դողաց: Մովսեսը ժողովրդին հանեց ճամբարից ու տարավ ճշմարիտ Աստծուն ընդառաջ, և նրանք կանգնեցին լեռան ստորոտի մոտ: Սինա լեռը ամբողջությամբ ծխի մեջ էր, քանի որ Եհովան կրակի մեջ իջել էր դրա վրա. լեռան ծուխը բարձրանում էր, ինչպես թրծավառարանի ծուխ, և ամբողջ լեռը սաստիկ ցնցվում էր... Գեղեցիկ է իր բարձրությամբ, ամբողջ երկրի ուրախությունն է: Սիոն լեռը հեռավոր հյուսիսային կողմերում, Մեծ Թագավորի քաղաքը: Նրա ամրոցներում Աստված հայտնի է որպես ապահով բարձունք... Սիոնից, որ կատարյալ է իր գեղեցկությամբ, Աստված փայլատակում է: Մեր Աստվածը գալու է, և նա չի լռելու: Նրա առջևում լափող կրակ, իսկ նրա շուրջը՝ փոթորիկ»²⁸:

²⁶ Հին Կտակարան: Մադոնսաց: 68-4:

"וּצְדִיקִים יִשְׁמְחוּ יַעֲלֻצוּ לִפְנֵי אֱלֹהִים וַיִּשְׂשׂוּ בִשְׂמֵחָה": תהלים: 68-4

²⁷ Coogn M.D., Stories from ancient Canaan, The Westminster Press, Kentucky, 1978, p 13 (թարգմանությունը՝ հեղինակի կողմից):

²⁸ Հին Կտակարան: Ելից: 19; 16-18: Մադոնսաց: 48: 2-3: 50: 2-3:

"וַיְהִי בַיּוֹם הַשְּׁלִישִׁי בְּהִיַת בְּבִקְרָ וַיְהִי קֶלֶת וּבִרְקִים וַעֲנַן כֶּבֶד עַל הָהָר וְקַל שֶׁפָּר חֲזַק מְאֹד וַיַּחֲרֹד כָּל הָעָם אֲשֶׁר בְּמַחֲנֵה: וַיֵּצֵא מִשָּׁה אֶת הָעַם לִקְרֹאת הָאֱלֹהִים מִן הַמַּחֲנֵה וַיִּתְּצֻבוּ בַּתְּחִית הָהָר: וַהֲרֵי סִינֵי"

• Եբրայեցիները Յահվեի անունը խուսափում էին բարձրաձայնել, քանզի այն սրբազան անուն էր, իսկ հասարակ մահկանացուն իրավունք չուներ այն արտասանել: Դա պատճառ դարձավ, որ եբրայեցիների Յահվե աստծո անունը փոխարինվի մեկ այլ անվամբ, դրանցից էին՝ Շեմ, Էլ, Էլոհիմ, Էլոահ, Ադոնայ (եբր. אדני, אלוה, אלוהים, לא, מש), իսկ Քանանում հաստատվելուց հետո այդ շարքը համալրեց նաև Բաալ անունը²⁹:

• Յահվեն, հանդիսանալով համայն մարդկության, կենդանիների և բնության աստվածը, իր մեջ ամփոփում էր այն բոլոր գործառույթները, որոնք կատարում էին Բաալ աստծո անունը կրող հեթանոսական պաշտամունքները: Սակայն ի տարբերություն Բաալի պաշտամունքի՝ Յահվեի պաշտամունքը շատ ավելի կանոնակարգված էր՝ որպես հավատք և կրոն:

Այսպիսով, այս անդրադարձը ցույց է տալիս, որ քանանի հեթանոսական հավատքի որոշ տարրեր տեղ են գտել Հին Կտակարանում: Ամենից հատկանշականը Բաալ աստծո պաշտամունքային հատկանիշների օգտագործումն է Յահվեի պաշտամունքի և նրա գործունեության մեջ: Իսրայելի Աստվածը հնարավոր է, որ միակը և ամենակարողն է, սակայն նրան ներկայացնելու և բացահայտելու միջոցները՝ ոչ:

עשן כלו מפני אשר ירד עליו יהוה באש ויעל עשנו כעשן הכבשן ויחרד כל ההר מאד: ... גדול יהוה ומהלל מאד בעיר אלהינו הר קדשו: יפה נוף משוש כל הארצ הר ציון ירכתי צפון קרית מלך רב: מציון מכלל יפי אלהים הופיע: יבו אלהינו ואל יחרש אש לפניו תאכל וסביביו נשערה מאד:"
שמות:18-16:19: תהלים: 3-48: 3-2:50:

²⁹ Miller P.D., The Religion of Ancient Israel, Westminster John Knox Press, 2000, p 90.

THE WORSHIP OF YAHWEH AND BAALISM IN THE PERIOD WHEN HEBREWS SETTLED IN CANAAN

Summary

Ani Hakobyan

The article concerns to the matters of Jewish belief during the period when Hebrews left Egypt and after long years of tortures in Sinai desert settled in Canaan. During that period they finally refused the paganism starting to worship the only God Yahweh (YHWH). Their religion was called Yahwism. Unlike Hebrews the Cananities had many Gods who mostly were cold by the name of God Baal. The name of their religion was Baalism. Those two religions were exposed to mutual contradictions and influences. As a result people started to confuse Baalism and Yahwism starting to identify the two liturgies Yahweh (YHWH) and Baal. In this article attempt was made to clarify the historic environment and circumstances where the widespread identification and afterwards contradictions of the mentioned two religions started.